Հավելված N 3
ՀՀ կառավարության 2026 թվականի
փետրվարի 12-ի N 147-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՄԲԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելությունների մեկնող ՀՀ ԱԱԲԽ-ի կազմում, բացի Հայաստանի Հանրապետությունում գործող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բուժաշխատողներից և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության մասնագետներից, կարող են ընդգրկվել նաև Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմինների և կազմակերպությունների հատուկ պատրաստություն անցած մասնագետներ (սույն որոշման N 1 հավելվածով հաստատված կազմին համապատասխան), ինչպես նաև, ըստ նպատակահարմարության, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչներ՝ ելնելով ընդունող երկրի առանձնահատկություններից:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՀՀ ԱԱԲԽ-Ի ՄԵԿՆԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

2. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին ՀՀ ԱԱԲԽ-ին ընդգրկելու համար հիմք են հանդիսանում՝

1) աղետից տուժած երկրի հետ նախապես կնքված արտակարգ իրավիճակներում համագործակցության, փոխօգնության համապատասխան համաձայնագիրը.

2) աղետից տուժած երկրի կողմից ուղղակի կամ միջազգային կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացված օգնություն հայցելու մասին պաշտոնական դիմումը.

3) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից ներկայացված առաջարկը՝ արտաքին քաղաքական նպատակահարմարությունից ելնելով:

3. Աղետից տուժած երկրի համապատասխան մարմինների հետ աղետից տուժածներին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու աշխատանքներում ՀՀ ԱԱԲԽ-ի ներգրավման նպատակահարմարությունը պարզելուց հետո Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին ՀՀ ԱԱԲԽ-ին ներգրավելու մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի առաջարկությամբ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից տրամադրված արտաքին քաղաքական նպատակահարմարության վերաբերյալ դիրքորոշման հիման վրա:

4. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին ՀՀ ԱԱԲԽ-ին ներգրավելու մասին որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության վարչապետի ստորագրմանը ներկայացնելիս դրան կցվում է նաև ՀՀ ԱԱԲԽ-ն մարդասիրական առաքելությունների ներգրավելու համար պահանջվող ծախսերի նախնական հաշվարկը:

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՀՀ ԱԱԲԽ-Ի ՄԵԿՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունն իրականացնում են նախապատրաստական միջոցառումներ ՀՀ ԱԱԲԽ-ն միջազգային մարդասիրական առաքելության երկիր ուղարկելու նպատակով:

6. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հետ աշխատանքային կարգով համաձայնեցնելուց հետո անհատական իրավական

ակտով սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին մասնակցելու համար ՀՀ ԱԱԲԽ-ն պատրաստականության բերելու ժամանակը.

2) դիմում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը՝ արտաքին քաղաքական նպատակահարմարության վերաբերյալ դիրքորոշում ստանալու, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, աղետից տուժած երկրի մուտքի արտոնագրերի տրամադրման հարցում աջակցության նպատակով:

7. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը՝

1) ներկայացնում է դիրքորոշում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին մասնակցելու արտաքին քաղաքական նպատակահարմարության վերաբերյալ.

2) կազմակերպում է աղետից տուժած երկրի արտակարգ իրավիճակների ոլորտի լիազոր մարմնի հետ փոխգործակցությունը, ներառյալ՝ սարքավորումների, երկակի նշանակության ապրանքների և դեղորայքի ներկրման թույլտվության համար.

3) անհրաժեշտության դեպքում աջակցում է երրորդ երկրի տարածքով ՀՀ ԱԱԲԽ-ի արագ տեղափոխմանը.

4) ապահովում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության կենտրոնական ապարատից կամ աղետից տուժած երկրում հավատարմագրված Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունից աշխատակցի տրամադրումը՝ ՀՀ ԱԱԲԽ-ին խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով.

5) աջակցում է ՀՀ ԱԱԲԽ-ի անձնակազմին աղետից տուժած երկրի մուտքի արտոնագրերի տրամադրման հարցում:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՀՀ ԱԱԲԽ-Ի ՄԵԿՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

8. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ՀՀ ԱԱԲԽ-ի մեկնումն աղետից տուժած երկիր, ելնելով նպատակահարմարությունից, իրականացվում է ավտոմոբիլային, երկաթուղային կամ օդային տրանսպորտի միջոցով:

9. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին մասնակցելու նպատակով ՀՀ ԱԱԲԽ-ն օդային տրանսպորտով ուղարկելու համար Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը նախապես պայմանագրեր է կնքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և ազգային ավիափոխադրողների հետ և, անհրաժեշտության դեպքում, ապահովագրում տրանսպորտային միջոցը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը հատկացվող միջոցների հաշվին:

10. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս միջազգային մարդասիրական առաքելություններին ՀՀ ԱԱԲԽ-ին ներգրավելու հետ կապված՝ ՀՀ ԱԱԲԽ-ի անձնակազմի ինքնաթիռ կեցության, ճանապարհորդական փաստաթղթերի, անձնակազմի ապահովագրման ու գործուղման, ՀՀ ԱԱԲԽ-ի գործունեության համար անհրաժեշտ միջոցների և անձնակազմի տեղափոխման նպատակով տրանսպորտային միջոցների վարձակալության ու այլ ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը հատկացվող միջոցների հաշվին:

11. ՀՀ ԱԱԲԽ-ի անդամների գործուղման ծախսերը (օրապահիկ, գիշերավարձ և այլն) հատուցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը հատկացված միջոցների հաշվին:

12. Աղետից տուժած երկրից ՀՀ ԱԱԲԽ-ի վերադառնալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը սահմանված կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարված ծախսերի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ